ռազորմներ կան Պասգեան նահանգաց մէջ, 'ի Գաղալոնիա և 'ի Սեկովիա։ կտրող զէնքեր 'ի Դոլեդոյ և 'ի Կիբուա-գոա. հրանօթոց ճուլարանք 'ի Սեւիլեա, Լիէրկան, Դրուպիա և Պարցհելոնա, և այլն։

Սպանիոյ վաճառականութիւնը շատ ցնասուեցաւ այն խռովութիւններէն ուրոնք պատճառ եղան Ամերիկայի կալուածները կորսնցնելու։ Առևտուրի համար մեծամեծ դժուարութիւններ են գետակաց և ջրանցից քիչ նաւարկելի ըլլալը, աղէկ ճամբաներ չըլլալը, ապահով չըլլալու վախը, ներքին մաքսատունները։ Շոգեկառաց ճամբաները նորերս յառաջադիմելու և շատնալու հետ են։ 1861 տարւոյն ընդհանուր վաճառականութեթիւը կ'ելլէր 888,325,000 ֆրանք, որոնցմէ 545,000,000ը ներս մտած վաճառուց համար և 342,000,000 դուրս հանուածներուն համար էր։ Ներս մտած վաճառքն են ցորեն, բամբակէ, մանած և մետաքսի գործուածներ, ոսկերչական ապրանք, պճինք, պղնձէ, ղէն և երկաթեղէն ապրանք, նորելուկ բաներ, պողվատ, չինութեան փայտ, Գաղղիոյ՝ Անգղիոյ և Գերմանիոյ հոտաւէտ նիւթեր։ Իսկ դուրս ելածներն են գինի, չոր պտուղ, բուրդ, անդիկ, կապար, սունկ, սեկ, օղի, ձէթ, կալաքար, մետաքս և ծխախոտ։

Սպանիոյ զանազան վաճառական նաւահանգիստները գրեթէ 6,000 նաւ կը զինեն, որոնցմէ 1,500ը 'ի Գատիսհ, 1,500 'ի Մալակա, 800 Պալէարեան կղզեաց մէջ, 700 'ի Պարցհելոնա, 600 'ի Կարթագինէ։

Կը շարունակուի։

Պէտք է անպատշաճութեան մը համբերել, երբ կարելի չէ այնմ դարման ընել՝ բայց եթէ մեծագոյն ցնասու։

Ո՞վ զքեզ այնպէս յաճախ խաբեր է՝ ինչպէս դու ինքն։

Փախիր 'ի հաճոյից, անոնք քու եաւէդ կուգան։

ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ

ՍԱՐԴՔ

(Տես երես 138)

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՅԻՇԱՏԱԿԱՑ ԲԱՆՔ

Է

Բայց ամեն զբօսանք իր վերջն ունի. և ստէպ այս վերջը անախորժ կ'ըլլայ։ Այսպէս եղաւ մեր ընտանութեան զուարճութիւնն ալ։

Ձմեռն հասաւ իր մառախլապատ քօղովը. դառն հովերը սկսան շնչել. ալեցին տարին որչափ առջևնին գտան միջատային որսական. նուազեցաւ կերակուրը. հետզհետէ պակսեցաւ որսիկը, և հաղիւ երբեք փնտռելով կարելի կ'ըլլար ջերմ տեղուանք գտնել. այն ալ վատոյժ, անհամ և կիսամեռ սառոյցքէն. զոր հաղիւ թէ ակռան դպցընելու արժանի կը սեպէր։

Կը ցաւէի խեղճ էակին վրայ. մանաւանդ քանի որ միտքս կու գար այն զոհը որ ամենօրեայ հրով ինծի համար կը ճենճերէր, սիրտս կը խշխշար յիշելով այն տագնապը որուն մէջ կը գտնուէր սարդիս որովայնը։ Կը մոռանայի ճար մ'ընել, ճար չէի գտնար. վասն զի ցուրտը քանի գնաց սաստկացաւ, և անոր բռնութեանը առջին ամենայն ճանճական շունչ անհետացաւ. անանկ որ ամենայն մանրախոյզ ասպատակութիւն՝ արևելք կամ արևմուտք, անօգուտ ելք կ'ունենար։

Լքայ փնտռելէն. ձանձրացայ այլոց որսորդաց յանձնելէն. և այս լքմանս մէջ՝ ամեն օր, ամեն ժամ սարդիս անշընչանալը տեսնել կը սպասէի։ Այդ կորստեան մոռացութիւնը ինծի ծանր կ'երևնար, յետ այնչափ ատեն սարդը՝ խնամքով պահելէս։